## ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի շնորհավորական ուղերձը

## Ուսուցչի օրվա առիթով

Թանկագի՛ն ուսուցիչներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առիթով: Ավանդույթ դարձած այս գեղեցիկ տոնը վկայությունն է այն մեծ ուշադրության ու հոգատարության, որ ցուցաբերվում են ուսուցչի ու նրա  աշխատանքի նկատմամբ: Ճակատագրի դաժան հարվածների առաջ կանգնած հայրենիքի փրկության ու հարատևման դեղատոմսը միշտ եղել է  հայ ուսուցչի ձեռքերում : Սյունիքի հոգևոր ու աշխարհիկ դպրոցներն ու վարդապետարանները ապահովել են սյունեցու գիտակցական ու բարոյական, ռազմական ու ֆիզիկական ուժն ու հզորությունը:

Սիրելի՛ ուսուցիչներ, դարերից եկած մեր ազգային արժեքների պահպանման, երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործը, վստահ եմ,  հոգատար ու հուսալի ձեռքերում է:

Դուք ձեր առաքելությունն իրականացնում եք արժանապատվորեն, որովհետև գիտակցում եք, որ առաջին հերթին ձեզանից է կախված մեր պետության ապագայի, երիտասարդ սերնդի գիտակրթական ու բարոյական նկարագիրը:

Մենք անում ենք առավելագույնը՝ նպաստելու մարզի կրթության բնագավառի խնդիրների լուծմանը: Ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր դպրոցների վերանորոգման ու վերազինման, ուսուցիչների աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ: Այս գործընթացները կրելու են շարունակական բնույթ: Ընդհանրապես, կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները գտնվում են մարզային իշխանությունների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Թող ձեր՝ մեր պետության ապագա քաղաքացիների ձևավորման գործում ներդրած ավանդը, թափած ջանքերը զուր չանցնեն, ձեր քրտնաջան աշխատանքը միշտ լինի գնահատված:

Կրկին շնորհավորելով այս հրաշալի տոնի առիթով, մաղթում եմ ձեզ քաջառողջություն, անսպառ եռանդ, ստեղծագործական նորանոր հաջողություններ և տոնական բարձր տրամադրություն:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**  **Ս. Խաչատրյան**

05 հոկտեմբերի 2015թ.